Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Գ.Չաուշի անվան հ. 188 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ֆիզկուլտուրա» (16 դասաժամ զբաղվածությամբ) և «տեխնոլոգիա» (14 դասաժամ զբաղվածությամբ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատանքը, որին հավակնում է,
2. փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն,
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 25-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքնային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ հունվարի 12-ից, ըստ կարգի:

Մրցույթը կանցկացվի «Երևանի Գ.Չաուշի անվան հ. 188 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հունվարի 31-ին՝ ժամը 14:00-ին, հասցեն՝ Հ.Բեկնազարյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել 010353207: